

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2010 թվականի նոյեմբերի 18)

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը, այսուհետ՝ Կողմեր,

Եվրասիական տնտեսական համայնքի (այսուհետ՝ Մաքսային միություն) շրջանակներում ինտեգրման գործընթացները խորացնելու եւ արագացնելու եւ միասնական տնտեսական տարածք ձեւավորելու նպատակով,

հաշվի առնելով «Եվրասիական տնտեսական համայնքի անդամ հանդիսացող պետությունների տեխնիկական կանոնակարգերի ներդաշնակեցման հիմքերի մասին» 2005 թվականի մարտի 24-ի համաձայնագրով, «Տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտներում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրով, «Մաքսային միության մաքսային տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա արտադրանքի շրջանառության մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրով, «Համապատասխանության գնահատման (հաստատման) աշխատանքներ կատարող սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հաստատման)) մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) հավաստագրման փոխադարձ ճանաչման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրով եւ «Մաքսային միության հանձնաժողովի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրով սահմանված դրույթները,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

1. Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության

հայտարարագիր՝ փաստաթուղթ, որով արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը, մատակարարը, վաճառողը) հաստատում է շրջանառության մեջ դրվող արտադրանքի համապատասխանությունը Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին,

համապատասխանության հայտարարագրում՝ արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի, մատակարարի, վաճառողի) կողմից շրջանառության մեջ դրվող արտադրանքի՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության հաստատման եղանակ,

Մաքսային միության անդամ հանդիսացող պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշան՝ նշում, որը ծառայում է արտադրանքը ձեռք բերողներին կամ սպառողներին շրջանառության մեջ դրվող արտադրանքի՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության մասին, տեղեկացնելու համար,

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության հավաստագիր՝ փաստաթուղթ, որով սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հաստատման)) մարմինը հաստատում է շրջանառության մեջ դրվող արտադրանքի համապատասխանությունը Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին,

սերտիֆիկացում՝ սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հաստատման)) մարմնի կողմից շրջանառության մեջ դրվող արտադրանքի՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության պարտադիր հաստատման եղանակ,

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատված փաստաթուղթ, որով սահմանվում են Մաքսային միության տարածքում արտադրանքին կամ արտադրանքին եւ արտադրանքին ներկայացվող պահանջների հետ կապված արտադրական, մոնտաժի, կարգավորման, շահագործման (օգտագործման), պահման, տեղափոխման (փոխադրման), իրացման եւ օգտագործման գործընթացներին ներկայացվող կիրառման եւ կատարման համար պարտադիր պահանջներ,

համապատասխանության գնահատման (հաստատման) տիպային սխեմա՝ կանոնների եւ ընթացակարգերի ամբողջություն, որոնցով սահմանվում են Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատման (հաստատման) աշխատանքների կատարման տիպային միջոցները:

Սույն Համաձայնագրում օգտագործվող մյուս հասկացությունները կիրառվում են «Տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի իմաստով:

2. Սույն Համաձայնագրի գործողությունը չի տարածվում սանիտարական, անասնաբուժական-սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների վրա:

Հոդված 2

1. Տեխնիկական կարգավորման ոլորտում Կողմերը համաձայնեցված քաղաքականություն են վարում՝ ղեկավարվելով «Տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի Համաձայնագրի 2-րդ հոդվածի դրույթներով:

2. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը Մաքսային միության մաքսային տարածքում գործում են անմիջականորեն:

3. Շրջանառության մեջ դրվող արտադրանքի՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատումը (հաստատումը) կատարվում է մինչեւ այդ արտադրանքը շրջանառության մեջ դնելը:

4. Կողմերն իրենց տարածքում ապահովում են Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանող արտադրանքի շրջանառությունը՝ չներկայացնելով արտադրանքին ներկայացված Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում պարունակվող այդպիսի արտադրանքին ներկայացվող պահանջներից բացի լրացուցիչ պահանջներ եւ չանցկացնելով համապատասխանության գնահատման (հաստատման) լրացուցիչ ընթացակարգեր:

5. Արտադրանքի՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատման (հաստատման) արդյունքների համադրելիությունն ապահովելու նպատակով՝ Կողմերն իրականացնում են համաձայնեցված քաղաքականություն՝ ուղղված չափումների միասնականության ապահովմանը:

Հոդված 3

1. Տեխնիկական կարգավորման ոլորտում Մաքսային միության նորմատիվ իրավական բազա ստեղծելու նպատակով՝ Կողմերը կազմում են արտադրանքի միասնական ցանկ, որի վերաբերյալ Մաքսային միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ (այսուհետ՝ միասնական ցանկ):

2. Միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի նկատմամբ, որին առնչվող՝ Մաքսային միության կամ Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ չեն մտել, գործում են Մաքսային միության օրենսդրության եւ Կողմերի՝ տեխնիկական կարգավորման ոլորտին առնչվող օրենսդրությունների նորմերը:

3. Միասնական ցանկը եւ դրա վարելու կարգը հաստատում է Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

4. Կողմերը թույլ չեն տալիս իրենց օրենսդրություններում սահմանել այն արտադրանքին ներկայացվող պարտադիր պահանջներ, որն ընդգրկված չէ միասնական ցանկում:

Հոդված 4

1. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը մշակվում են միայն միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի առնչությամբ, եթե այդպիսի արտադրանքի առնչությամբ Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կանոնակարգեր չեն ընդունվել:

Այն դեպքում, երբ ընդունվում է Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կանոնակարգ այն արտադրանքի առնչությամբ, որի առնչությամբ ընդունվել է Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ, ապա Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի կամ դրա համապատասխան մասի գործողությունը դադարեցվում է Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից:

2. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը մշակվում եւ ընդունվում են Մաքսային միության մաքսային տարածքում մարդու կյանքի եւ (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի եւ (կամ) առողջության պաշտպանության ապահովման, սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունների կանխման, ինչպես նաեւ էներգետիկ արդյունավետության եւ ռեսուրսների պահպանությունն ապահովելու նպատակով:

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի ընդունումն այլ նպատակներով չի

թույլատրվում:

3. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով սահմանվում են արտադրանքին կամ արտադրանքին եւ արտադրանքին ներկայացված պահանջների հետ կապված արտադրական, մոնտաժի, կարգավորման, շահագործման (օգտագործման), պահման, տեղափոխման (փոխադրման), իրացման եւ օգտագործման գործընթացներին ներկայացվող պահանջներ, ինչպես նաեւ համապատասխանության նույնականացմանը, եղանակին, սխեմային եւ գնահատման (հաստատման) ընթացակարգին վերաբերող կանոնները:

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում կարող են նաեւ պարունակվել տերմինաբանության, փաթեթավորման, մակնշման, պիտակների եւ դրանց փակցման կանոնների վերաբերյալ պահանջներ, սանիտարական, անասնաբուժական-սանիտարական եւ բուսասանիտարական պահանջներ ու ընթացակարգեր:

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը մշակվում են՝ Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 321 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կանոնակարգի տիպային կառուցվածքի մասին» առաջարկությունների համաձայն:

4. Որպես Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի մշակման համար հիմք՝ կիրառվում են համապատասխան միջազգային ստանդարտները (կանոններ, հրահանգներ ու հանձնարարականներ եւ ստանդարտացման միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված այլ փաստաթղթեր)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան փաստաթղթերը բացակայում են, չեն համապատասխանում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի ընդունման նպատակներին, ինչպես նաեւ կլիմայական ու աշխարհագրական գործոնների կամ տեխնոլոգիական եւ այլ առանձնահատկությունների արդյունքում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ տարածաշրջանային փաստաթղթերը (կանոնակարգեր, հրահանգներ, որոշումներ, ստանդարտներ, կանոններ եւ այլ փաստաթղթեր), ազգային (պետական) ստանդարտները, ազգային տեխնիկական կանոնակարգերը կամ դրանց նախագծերը:

5. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը կարող են ընդգրկել հատուկ պահանջներ, որոնք արտացոլում են Կողմերի կլիմայական ու աշխարհագրական գործոնների հետ կապված առանձնահատկությունները կամ տեխնոլոգիական առանձնահատկությունները, որոնք գործում են միայն Կողմերի տարածքներում:

Հոդված 5

1. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման, փոփոխման եւ չեղյալ հայտարարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

2. Մաքսային միության կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու կարգը եւ, անհրաժեշտության դեպքում, անցումային դրույթները սահմանվում են Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով եւ (կամ) դրա ընդունման մասին Հանձնաժողովի որոշմամբ:

3. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից Կողմերի օրենսդրություններով սահմանված համապատասխան պարտադիր պահանջները Կողմերի տարածքներում չեն կիրառվում:

Հոդված 6

1. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման (հաստատման) նպատակով կարող են կիրառվել միջազգային, տարածաշրջանային ստանդարտները, իսկ դրանց բացակայության դեպքում (մինչեւ տարածաշրջանային ստանդարտների ընդունումը)՝ Կողմերի ազգային (պետական) ստանդարտները:

2. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման նպատակով Հանձնաժողովը հաստատում է միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Կողմերի ազգային (պետական) ստանդարտների ցանկը, որոնց կիրառման արդյունքում՝ կամավոր հիմունքներով ապահովվում է ընդունված Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը:

3. Մաքսային միության տեխնիկական պահանջներին արտադրանքի համապատասխանությունը գնահատելիս (հաստատելիս) հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների անցկացման նպատակով՝ Հանձնաժողովը հաստատում է միջազգային ու տարածաշրջանային ստանդարտների ցանկը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկ, որոնք ընդգրկում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների անցկացման կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ ընդունված Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման ու կատարման եւ արտադրանքի համապատասխանության գնահատումն

(հաստատումն) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ:

Հոդված 7

1. Այն արտադրանքը, որի նկատմամբ ընդունվել է Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (տեխնիկական կանոնակարգեր), դրվում է շրջանառության մեջ Մաքսային միության մաքսային տարածքում այն պայմանով, որ այն անցել է Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով) սահմանված համապատասխանության գնահատման (հաստատման) համար անհրաժեշտ ընթացակարգերը:

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով սահմանվող արտադրանքի համապատասխանության գնահատումն (հաստատումն) անցկացվում է գրանցման, փորձարկման, համապատասխանության հաստատման (համապատասխանության հայտարարագրման, սերտիֆիկացման), փորձաքննության եւ (կամ) այլ եղանակով:

2. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության պարտադիր հաստատումը կատարվում է համապատասխանության կամ սերտիֆիկացման հայտարարագրման ձեւով: Համապատասխանության գնահատման (հաստատման) ընթացակարգերը սահմանվում են Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով համապատասխանության գնահատման (հաստատման) տիպային սխեմաների հիման վրա:

Համապատասխանությունը հայտարարագրելիս հայտատու կարող է լինել Կողմի օրենսդրության համաձայն դրա տարածքում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձը՝ որպես անհատ ձեռնարկատեր, կամ արտադրողը կամ վաճառողը, կամ օտարերկրյա արտադրողի հետ ունեցած պայմանագրի հիման վրա վերջինիս՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի համապատասխանության եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության դեպքում պատասխանատվության մասերով գործառույթներն իրականացնող անձը (օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձ): Հայտատուների շրջանակը սահմանվում է՝ տեխնիկական կանոնակարգի համաձայն:

3. Սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ցանկում ընդգրկված միջազգային, տարածաշրջանային եւ (կամ) ազգային (պետական) ստանդարտների կամավոր

հիմունքով կիրառումը համապատասխան Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման բավարար պայման է:

Նշված ցանկում ներառված ստանդարտները չկիրառելը չի կարող դիտարկվել որպես Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների չպահպանում:

4. Այն արտադրանքը, որը համապատասխանում է ուժի մեջ մտած Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի՝ այդ արտադրանքին վերաբերող պահանջներին եւ որն անցել է Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված համապատասխանության գնահատման (հաստատման) ընթացակարգերը, Մաքսային միության անդամ հանդիսացող պետությունների շուկայում մակնշվում է շրջանառության միասնական նշանով:

5. Համապատասխանության գնահատման (հաստատման) տիպային սխեմաները, համապատասխանության գնահատման (հաստատման) (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության հայտարարագրի, Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության հավաստագրի) փաստաթղթերի միասնական ձեւաչափերը, Մաքսային միության անդամ հանդիսացող պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանի պատկերումն ու դրա կիրառման կարգը հաստատվում է Հանձնաժողովի կողմից:

Հոդված 8

1. Մաքսային միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հաստատման) աշխատանքներն իրականացվում են (համապատասխանության գնահատման (հաստատման)) հավաստագրված սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (լեւտոռոնների) կողմից, որոնք ընդգրկված են «Մաքսային միության մաքսային տարածքում պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա արտադրանքի շրջանառության մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրի համաձայն ձեւավորված՝ Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (լեւտոռոնների) Միասնական ռեեստրում:

2. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հաստատման) աշխատանքներ կատարող սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հաստատման)) մարմինների, փորձարկման լաբորատորիաների (լեւտոռոնների) հավաստագրման աշխատանքների

արդյունքների ճանաչումն իրականացվում է՝ «եւ համապատասխանության գնահատման (հաստատման) աշխատանքներ կատարող սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հաստատման)) մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) հավաստագրման փոխադարձ ճանաչման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրի, ինչպես նաեւ Կողմերի միջեւ առանձին համաձայնագրերի համաձայն:

3. Միասնական ցանկում ընդգրկված այն արտադրանքի համապատասխանության գնահատման (հաստատման) արդյունքների ճանաչումը, որի վերաբերյալ՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը կամ Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ չեն մտել, իրականացվում է՝ «Մաքսային միության մաքսային տարածքում պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա արտադրանքի շրջանառության մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրի, ինչպես նաեւ Կողմերի միջեւ առանձին համաձայնագրերի համաձայն:

Հոդված 9

1. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջները չպահպանելու համար, ինչպես նաեւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հաստատման) ընթացակարգերի խախտման համար պատասխանատվությունը սահմանվում է յուրաքանչյուր Կողմի օրենսդրությամբ:

2. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող կամ դրա նկատմամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հաստատման) ենթակա եւ առանց համապատասխանության գնահատման (հաստատման) փաստաթղթի եւ (կամ) Մաքսային միության անդամ հանդիսացող պետությունների շուկայում առանց շրջանառության միասնական նշանի մակնշման շրջանառության մեջ դրվող կամ գտնվող արտադրանքի հայտնաբերման դեպքում յուրաքանչյուր Կողմի լիազոր մարմինները ձեռնարկում են միջոցներ՝ տվյալ արտադրանքը շրջանառության մեջ դնելը կանխելու, այն, Կողմերի օրենսդրության համաձայն, շրջանառությունից հանելու, ինչպես նաեւ մյուս Կողմերին դրա մասին տեղեկացնելու համար:

3. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների խախտման համար, ինչպես նաեւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հաստատման) ընթացակարգեր

կիրառելիս Կողմերը պատասխանատվության սահմանման ոլորտում ներդաշնակեցնում են յուրաքանչյուր Կողմի օրենսդրությունը:

Հոդված 10

1. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունը (հսկողությունը) իրականացվում է յուրաքանչյուր Կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կողմերի լիազորված մարմինները Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին կամ Կողմերի օրենսդրությամբ այն արտադրանքի առնչությամբ սահմանված պարտադիր պահանջներին, որի վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգեր չեն ընդունվել, այդ թվում՝ երրորդ երկրներից մատակարարվող արտադրանքի համապատասխանության պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնելիս եւ շրջանառության մեջ դրվող արտադրանքը մարդու կյանքի եւ (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի եւ (կամ) առողջության համար վտանգավոր համարվող ապրանքների շարքին դասելիս, հնարավորինս կարճ ժամանակահատվածում (կամ այդպիսի անհամապատասխանության սահմանման հետ միաժամանակ կամ վտանգավոր արտադրանքի հայտնաբերման) ուղարկում են համապատասխան տվյալները Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առետրի ինտեգրված տեղեկատվական համակարգ, դրա մասին տեղեկացնում են մյուս Կողմերի լիազորված մարմիններին եւ այդպիսի արտադրանքի մուտքը կողմերի տարածք կանխելու համար միջոցներ են ձեռնարկում:

Հոդված 11

Կողմերը, ղեկավարվելով իրենց օրինական շահերի պաշտպանությամբ, կարող են ձեռնարկել արտակարգ միջոցներ՝ վտանգավոր արտադրանքի՝ շրջանառության մեջ դնելը կանխելու նպատակով:

Այդ դեպքում Կողմն անմիջապես տեղեկացնում է մյուս Կողմերին ձեռնարկված արտակարգ միջոցների մասին եւ սկսում է այս հարցի շուրջ խորհրդակցությունների ու բանակցությունների գործընթացը:

Նման արտակարգ միջոցների ձեռնարկման կարգը սահմանվում է Կողմերի միջեւ գործող առանձին համաձայնագրով:

Հոդված 12

Մաքսային միության տեխնիկական կարգավորման ոլորտում Կողմերն ստեղծում են տեղեկատվական համակարգ՝ որպես Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի մի մաս:

Հոդված 13

Հանձնաժողովը, Կողմերի կողմից համապատասխան լիազորություններն իրեն վերապահելու օրվանից, իրականացնում է հետեւյալ գործառույթները.

միասնական ցանկի եւ դրա վարման կարգի հաստատումը,

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի մշակման նախագծերի (ծրագրերի) հաստատումը,

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի ընդունումը, փոփոխումը եւ չեղյալ հայտարարումը,

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման, փոփոխման եւ չեղյալ հայտարարման կարգի սահմանումը,

միջազգային ու տարածաշրջանային ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված ազգային (պետական) ստանդարտների ցանկի մշակման ու հաստատման կարգի հաստատումը,

համապատասխանության գնահատման (հաստատման) տիպային սխեմաների հաստատումը,

համապատասխանության գնահատման (հաստատման) (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության հայտարարագրի, Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության հավաստագրի) փաստաթղթերի միասնական ձեւաչափերի հաստատումը,

Մաքսային միության անդամ հանդիսացող պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանի պատկերման հաստատումը,

Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական

նշանի ու դրա կիրառման կարգի վերաբերյալ դրույթների հաստատումը,

այն դրույթի հաստատումը, որը վերաբերում է Մաքսային միության մաքսային տարածք այն արտադրանքի ներմուծմանը, որի վերաբերյալ Մաքսային միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ:

Հոդված 14

1. Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

2. Եթե Կողմերը խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը, դրանց անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկի կողմից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքը ներկայացնելու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման այլ միջոցի վերաբերյալ Կողմերի միջև պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 15

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրը ժամանակավոր կիրառվում է ստորագրման օրվանից եւ ենթակա է վավերացման:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի նոյեմբերի 18-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Հանձնաժողովում, որը լինելով սույն Համաձայնագրի ավանդապահ՝ յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

(ստորագրություններ)